

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
29.05.2009- 31.12.2010 թվ.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանուր հաշվետվություն

2008 թվականի հուլիսի 12-ին ՀՀ Նախագահի կարգադրությամբ հռչակվեց Հանրային խորհրդի ստեղծումը, իսկ 2009 թվականի մարտի 11-ին հաստատվեց կանոնադրությունը և ՀԽ առաջին 12 անդամների կազմը: Այնուհետև ձևավորվեցին 12 ոլորտային հանձնաժողովները /հանձնաժողովներում ընդգրկված անդամների թիվը՝ **1950**/, ընտրվեցին հանձնաժողովների նախագահներ:

2009 թվականի մայիսի 29-ին ՀՀ Հանրային խորհուրդը՝ ձևավորելով իր ամբողջական կազմը, սկսեց իր գործունեությունը, որն ամրագրվեց ՀՀ Նախագահի հրամանագրով:

Հանրային խորհրդի հանձնաժողովների կազմում ընգրկված **1950** անդամները ներկայացնում են ավելի քան **1200** հասարակական կազմակերպություններ, միություններ, ասոցիացիաներ և հիմնադրամներ, մարզերը ներկայացված են **422** անդամներով /21.7%/, կանայք՝ **635**-ով /32.7%/: ՀԽ 12 ոլորտային հանձնաժողովներում աշխատում են **329** գիտությունների թեկնածուներ և **129** դոկտոր-պրոֆեսորներ: Տարիքային կտրվածքով ՀԽ-ի հանձնաժողովի անդամների տարիքը բաշխվում է հետևյալ կերպ՝ 18-30 տարեկաններ՝ 17%, 31-45 տարեկաններ՝ 21,9%, 46-60 տարեկաններ՝ 36,7%, 61 և ավելի տարեկաններ՝ 24,4%: ՀԽ շրջանակներում գործում են 66 ենթահանձնաժողովներ, որոշակի հարցեր քննարկելու համար՝ աշխատանքային խմբեր:

Համաձայն ՀԽ կանոնադրության Հանրային խորհուրդը բարձրացրած հարցերը քննարկում և դրանց վերաբերյալ որոշումներ է ընդունում իր լիազումար նիստերում: Խնդիրների մասին իր եզրակացություններն ու առաջարկությունները կարող է ներկայացնել նաև ՀԽ նախագահը: Բացի այդ, ՀԽ հանձնաժողովները իրավունք ունեն ինքնուրույն ներկայացնել հարցեր, եզրակացություններ ու առաջարկություններ համապատասխան պետական մարմիններին:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել են ՀԽ **11** լիազումար նիստեր, որոնցում քննարկվել են **43** օրակարգային հարց, ընդունվել է **26** որոշում և լսվել է տարբեր խնդիրների վերաբերյալ **18** տեղեկատվություն: Վերը նշված օրակարգային հարցերի մի մասն ընտրվում է հանրության կողմից բարձրացրած բազմաթիվ հարցերի թվից՝ ՀԽ ոլորտային հանձնաժողովներում անցնելով համապատասխան քննարկումների ճանապարհ: Հարցերի մյուս մասը բարձրացրել են ՀԽ անդամները: Երկու հարց՝ ՀՀ-ում համաներում հայտարարելու մասին և “Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին” և “Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին” 2009թ. օգոստոսի 31-ին նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ, առաջադրվել է ՀՀ Նախագահի կողմից, որոնք քննարկվել են ՀԽ բոլոր հանձնաժողովներում և որոնց վերաբերյալ ՀԽ ընդունել է համապատասխան որոշումներ:

Հանրային խորհրդի աշխատանքային խումբը, համագործակցելով ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության համապատասխան ստորաբաժանումների հետ, փոփոխություններ է ներկայացրել ՀՀ ԱԺ-ի և կառավարության կանոնակարգերում, ինչը թույլ կտա ՀԽ անդամներին մասնակցելու վերը նշված պետական մարմիններում անցկացվող

քննարկումներին /կառավարության օրակարգում փոփոխություններն արդեն կատարվել են, ԱԺ օրակարգում` ընթացքի մեջ են/:

2010 թվականի ընթացքում ՀԽ պատվիրակությունները պաշտոնական այցով եղել են ԼՂՀ-ում, որտեղ բանակցել են ԼՂՀ իշխանությունների հետ և Մոսկվայում, որտեղ կնքվել է երկկողմանի հուշագիր Ռուսաստանի Դաշնության Հասարակական պալատի հետ:

2010 թվականի հուլիսի 7-ին Նյու-Յորքում ՀՀ Հանրային խորհուրդը անդամակցել է Տնտեսական և սոցիալական խորհուրդների ու համանման ինստիտուտների միջազգային ասոցիացիային /AICESIS/ և մասնակցել այդ միջազգային կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի աշխատանքներին:

2010թ. մարտին ՀԽ գյուղատնտեսության հարցերին նվիրված աշխատանքային խումբը, ՀԽ նախագահ Վ.Մանուկյանի ղեկավարությամբ, ՀՀ վարչապետի գլխավորությամբ և ՀԽ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովի կոլեգիայի անդամների մասնակցությամբ /Հ.Թադևոսյան, Յ.Ջավադյան, Խ.Հարությունյան/, այցելել է Արմավիրի մարզի Լուկաշին և Քարակերտ համայնքներ, հանդիպել համայնքներում ստեղծված կոոպերատիվների անդամների հետ, ծանոթացել նրանց խնդիրներին: Մանրամասն քննարկումներից հետո որոշվել է խթանել գյուղատնտեսական կոոպերատիվների (սպառողական) զարգացմանը:

2010 թվականին ՀԽ աշխատանքային խումբը /Վ.Մանուկյան, Հ.Թադևոսյան, Վ.Սաֆարյան, Կ.Առաքելյան, Ռ.Աթոյան, Յ.Ջավադյան, Խ.Հարությունյան, Ա.Տեր-Տաճատյան/ այցելել է Տավուշի մարզ, ծանոթացել սահմանամերձ գյուղերում տիրող իրավիճակին և այցելության արդյունքում մշակված եզրակացությունները ներկայացրել ՀՀ կառավարություն:

ՀԽ մեկ ուրիշ աշխատանքային խումբ /Գ.Բաղիրյան, Կ.Ղազարյան, Հ.Հովհաննիսյան, Ա.Տեր-Տաճատյան, Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյան/ այցելել է ցմահ դատապարտվածներին` վերջիններիս բազմաթիվ դիմում-խնդրանքներով:

2010 թվականի նոյեմբերին ՀԽ երիտասարդական ենթահանձնաժողովի անդամները, մշակույթի ենթահանձնաժողովի նախագահ Գագիկ Մանասյանի աջակցությամբ, կազմակերպել են բարեգործական ակցիա` Վայոց Ձորի մարզի Խաչիկ գյուղի անապահով ընտանիքներին բաժանել գրքեր ու նվերներ:

Ստորև ներկայացված են ՀԽ-ում, ՀԽ հանձնաժողովներում ու աշխատանքային խմբերում քննարկված հարցերը, մշակված առաջարկություններն ու եզրակացությունները:

Հանրային խորհրդի անդամների կողմից բարձրացված, ոլորտային հանձնաժողովներում քննարկումներ անցած և ՀԽ լիազումար նիստում վերջնական լուծում ստացած հարցերի թվում են`

1. ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման անհրաժեշտության մասին առաջարկությունները: Եղան նաև այս ոլորտին առնչվող այլ առաջարկություններ /ՀԽ շրջանակներում ստեղծվեծ աշխատանքային խումբ. այնուհետև` ՀԽ գյուղատնտեսության և բնապահպանական հարցերի հանձնաժողով/: Արդյունքում` վերը նշված առաջարկությունները տեղ գտան ՀՀ գյուղատնտեսության զարգացման 2010-2020 թ. հայեցակարգի մեջ, ՀՀ կառավարության կողմից ներկայացվող տվյալ ոլորտի հետ կապված բոլոր նախագծերը փորձաքննություն են անցնում ՀԽ համապատասխան հանձնաժողովում, ՀԽ անդամներ Վ.Մովսիսյանը, Խ.Հարությունյանը

և Յ.Ջավադյանը ընդգրկվեցին ՀՀ գյուղատնտեսության նախարարության կոլեգիայի կազմում:

2. Հանրակրթության մասին առաջարկությունների փաթեթը /ՀԽ կրթության և գիտության ենթահանձնաժողով, հանրակրթական ոլորտի խնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ/: Այս փաթեթը քննարկվեց ՀՀ Նախագահի հետ հանդիպման ընթացքում, ՀՀ կրթության և գիտության նախարարի մասնակցությամբ: Փաթեթում տեղ գտած առաջարկությունների մի մասը ընդունվեց նախարարության կողմից:
3. Հայկական հեռուստատեղիների հաղորդումների բովանդակությունն ու դրա հետևանքներն ուսումնասիրող մշտական հանձնախմբի /համանախագահներ՝ Հ.Մուսայելյան, Հ.Դեմոյան/ եզրակացություններն և առաջարկությունները, որից հետո տեղի է ունեցել ՀՀ հեռուստառադիոհեռարձակողների գործունեության էթիկական սկզբունքների խարտիայի ստորագրումը /ՀԽ անդամներ՝ Հ.Հովհաննիսյան, Գր.Բաղիրյան/:
4. Ազգային համագործակցության ցանցի ստեղծումը /ՀԽ ձեռնարկատիրական ու սպառողների պաշտպանության հացերի հանձնաժողով/: Այս առաջարկության կապակցությամբ ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց՝ “Ազգային համագործակցություն” հասարակական կազմակերպության հետ համատեղ ստեղծել ԱՀ հիմնադրամ: /մանրամասն տեղեկությունները՝ ձեռնարկատիրական ու սպառողների պաշտպանության հացերի հանձնաժողովի հաշվետվության բաժնում/:
5. ՀՀ կառավարության և հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման վերաբերյալ առաջարկությունները /ՀԽ ձեռնարկատիրական ու սպառողների պաշտպանության հացերի հանձնաժողովի նախագահ Ա.Սադոյան, ՀԽ անդամ՝ Հ.Մուսայելյան/:
6. Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի սովորողների նկատմամբ աշխատակցների կողմից իրականացված հակաօրինական գործողությունների կապակցությամբ և լրագրող Մ.Սուխոլոյանի նկատմամբ հարուցված քրեական գործերի անաչառ ընթացքն ապահովելու վերաբերյալ որոշումը: Արդյունքում՝ Մ.Սուխոլոյանին առաջադրված մեղադրանքները հանվեցին և իրական հակաօրինական և հակաբարոյական արարքներ կատարած անձինք ենթարկվեցին քրեական պատասխանատվության և պատժի:

Արձագանքելով հանրությանը հուզող հարցերին՝ Հանրային խորհուրդը իր համապատասխան հանձնաժողովներում քննարկելուց հետո կայացրել է համապատասխան որոշումներ և իր առաջարկություններն ու եզրակացությունները ներկայացրել ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարությանը.

1. “Լեզվի մասին” և “Հանրակրթության մասին” ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ /ՀԽ մի շարք ենթահանձնաժողովներ/: Արդյունքում՝ ՀՀ ԱԺ ընդունեց փոփոխությունների փոխզիջումային տարբերակը:
2. Երևանի “Մոսկվա” ամառային կինոթատրոնի հետագա ճակատագրի մասին /ՀՀ Հանրային խորհրդի քաղաքաշինության և ճարտարապետության հարցերի ենթահանձնաժողովի նախագահ Գ.Ազիզյան/: ՀԽ, դեմ արտահայտվելով այդ շինության քանդմանը, բոլոր շահագրգիռ կողմերին առաջարկեց բանակցության ճանապարհով գտնել փոխզիջման տարբերակներ: Ներկայումս հարցը փաստացի գտնվում է սառեցված վիճակում:
3. “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ /ՀԽ քաղաքացիական հասարակության կայացման և մարդու իրավունքների հարցերի հանձնաժողով/: Առաջարկությունները ներկայացվեցին ՀՀ արդարադատության նախարարություն, որը սկզբից դրանք չընդունեց: Սակայն

միջազգային փորձաքննության եզրակացությունից հետո հանձնաժողովի առաջարկությունների մեծ մասը հաշվի առնվեց և ընդունվեց ՀՀ ԱԺ կողմից:

4. Արհմիությունների հետ կապված “ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” /ՀԽ ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողով/: ՀԽ շրջանականերում կազմակերպված լսումների ընթացքում, որին մասնակցում էին բոլոր արհմիությունների ներկայացուցիչները, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարը, ինչպես նաև ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովի նախագահը վերը նշված օրինագիծը քննարկվեց և ՀԽ առաջարկությունների մի մասը ընդունվեց:
5. Երթևեկության և ավտոկայանային գործունեության հետ կապված ավտոտրանսպորտի շահագործման և ավտոկայանատեղերի գործունեության հայեցակարգի մշակման վերաբերյալ: Այս խնդիրը շարունակվում է գտնվել քննարկման ընթացքում /ՀԽ ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովի ավտոտրանսպորտի և երթևեկության հարցերի ենթահանձնաժողովի նախագահ՝ Տ.Հովհաննիսյան/:

ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վ.Մանուկյանի կողմից ՀՀ վարչապետին գրություններ և դիմումներ են ուղղվել՝ հիմք ընդունելով ՀԽ-ի հանձնաժողովների կարծիքները և առաջարկությունները՝

- Վանաձորում “Մարդու իրավունքների հայկական դպրոցի” բացման վերաբերյալ /ՀԽ քաղաքացիական հասարակության կայացման հանձնաժողով/;
- Ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման հայեցակարգի մասին /ՀԽ ֆինանսատնտեսական և բյուջետային հանձնաժողով/;
- Հայ-իրանական երկաթգծի կառուցման վերաբերյալ /ՀԽ ֆինանսատնտեսական և բյուջետային հանձնաժողով/;
- ՀՀ բնակավայրերի քաղաքաշինական ծրագրերի և ՀՀ գյուղական համայնքներում քաղաքաշինական միջոցառումների մասին /ՀԽ տեղական ինքնակառավարման և տեղական կառավարման հանձնաժողով/;
- Արտավազ գյուղի բնակիչների դիմում-բողոքի վերաբերյալ /ՀԽ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողով/;
- “Կոմետա” գիտահետազոտական ինստիտուտի վերաբերյալ /ՀԽ-ի ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողով/:

ՀԽ նախագահը տարբեր գրություններ է ուղղել մի շարք հրատապ հարցերի վերաբերյալ, որոնցից են՝

- “Արարատ ավիա” ընկերության օդաչուներին արցախյան պատերազմին մասնակցելու համար պարգևատրման մասին /ՀՀ Նախագահին/;
- Սյունիքի մարզի Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնի համար մրցույթի անցկացման վերաբերյալ /ՀՀ տարածքային կառավարման նախարարին/;
- “Դավմայի այգիների” հողօգտագործողների հետ կապված /ՀՀ տարածքային կառավարման նախարարին/;
- Աբխազառուսական սահմանը խախտելու պատճառով ՀՀ քաղաքացիներին Վրաստանում բանտարկելու վերաբերյալ /ՀՀ արտաքին գործերի նախարարին/;
- Երևանում Գարեգին Նժդեհի արձանը տեղադրելու հետ կապված /Երևանի քաղաքապետին/;
- “Մասիս 3” շինարարական կոոպերատիվի վերաբերյալ /ՀՀ վարչապետին/;

- “Կանաչագարդ երկիր” հկ-ի առաջարկությունները՝ ՀՀ միջպետական նշանակության մայրուղիների և այլ ճանապարհների եզրին պաշտպանական անտառաշերտերի հիմնադրման վերաբերյալ /ՀՀ վարչապետին/;
- Ստեկլումաշ գործարանի փակման վերաբերյալ /ՀՀ վարչապետին/;
- “Միս, Մասիս, Նոր Հայաստան” լճափնյա հանգստավայրեր ծրագրի վերաբերյալ /ՀՀ վարչապետին/;
- “Զորաց Քարեր բնակատեղի” պետական արգելոցի տարածքում տեղակայված հուշարձանախմբի չափագրման, լազերային սկանավորման և նկարահանման աշխատանքների վերաբերյալ /ՀՀ վարչապետին/;
- “Ջերմուկ” հանքային ջրերի մի շարք գործարանների ներկայացուցիչների դիմումը՝ “Աշխարհագրական նշումների մասին” ՀՀ օրենքի դրույթների վերաբերյալ /ՀՀ Նախագահին և ՀՀ վարչապետին/:

ՀԽ-ի հանձնաժողովներ և ՀԽ-ի անդամներ

Ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովը /180 անդամ/ բաղկացած է 16 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 22 անդամ: Հանձնաժողովը անցկացրել է 5 լիազումար և հանձնաժողովի կոլեգիայի 15 նիստեր: Մասնավորապես, հանձնաժողովը իր շրջանակներում քննարկել, մշակել և ներկայացրել է առաջարկություններ և եզրակացություններ՝

1. ՀՀ ինովացիոն քաղաքականության մասին /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/:
2. ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգի մասին /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/:
3. Հայաստանի հելիոֆիկացիայի եւ հելիոտեխնիկական արդյունաբերությունը զարգացնելու հարցերը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ Նախագահին ՀՀ վարչապետին/:
4. Ոչ մետաղական հանքանյութերի նոր արտադրատեսակների արտադրության մասին /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/:
5. Հայ-իրանական երկաթգծի շինարարական աշխատանքների մասին /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/:

Հանձնաժողովի քաղաքաշինության և ճարտարապետության հարցերի ենթահանձնաժողովի ներկայացմամբ ՀԽ որոշում է կայացրել հանրային հնչեղություն ունեցող մեկ այլ հարցի՝ Երևանի “Մոսկվա” ամառային կինոթատրոնի հետագա ճակատագրի վերաբերյալ:

Հանձնաժողովում, այնուհետև ՀԽ-ում քննարկվել և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին է ներկայացվել գրություն՝ գազի սակագնի ձևավորման մասին ՀԽ եզրակացությունները:

Հանձնաժողովի նախագահ Վազգեն Սաֆարյանը ՀԽ-ի նիստերին տեղեկատվություն է ներկայացրել Սյունիքի մարզում ուրանի հանքավայրի ուսումնասիրման աշխատանքների մասին, ինչպես նաև հայկական երկաթգծի կամուրջների վթարային վիճակի մասին:

Հանձնաժողովը քննարկել է նաև՝

- “Նաիրիտ գործարան” ՓԲԸ աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող հանգամանքների հարցը;

- վերականգնվող էներգիայի ստացման նոր աղբյուրների վերաբերյալ հայտնագործությունների ներդրման հարցը;
- ՀՀ-ում փոքր ավիացիայի վերականգման հարցը;
- Քանաքեռ-Զեյթուն համայնքի ուսանողական թաղամասում երկաթգծի կիսակայարան կառուցելու անհրաժեշտության մասին հարցը /ՀԽ ֆինանսատնտեսական և բյուջետային հանձնաժողովի նախագահ Վ.Սաֆարյանի կողմից ուղղվել է Երևանի քաղաքապետին/;
- հարկային վարչարարության դեպքեր;
- “Հայկական ազգային դրամի զբոսայգի” հիմնելու մասին հեղինակային ծրագիրը /դրական եզրակացություն/;
- 2003 թվ. ընդունված “ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի” իրականացման գործընթացը /ընթացքի մեջ է/;
- “Ակցիզային հարկի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության առաջարկությունները /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/;
- Երկաթգծի կամուրջների վթարային վիճակի վերաբերյալ հարցը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/;
- “Մեքենաշինարարների մասնագիտական տոն” հիմնելու մասին հարցը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/;
- Նոր Կյուրիի բնակիչների դիմումը՝ ճանապարհը ասֆալտապատելու մասին /ՀԽ-ի նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/

Հանձնաժողովի կողմից անդամները 2010 դեկտեմբերի 14-ին հանդիպում են ունեցել ՀՀ վարչապետի հետ և քննարկել ՀՀ արդյունաբերության զարգացման հետ կապված խնդիրները:

Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովը /144 անդամ/ բաղկացած է 3 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կողմից ընդգրկում է 17 անդամ: Անցած ժամանակաշրջանում հանձնաժողովն անցկացրել է 2 լիազումար նիստ և կողմից 6 նիստ. քննարկվել են հետևյալ հարցերը՝

1. “Գյուղացիական տնտեսություններում արտադրության կազմակերպման հարցերի ուսումնասիրման և գյուղացիական կոոպերատիվների զարգացման խնդիրները” և “ՀՀ գյուղատնտեսության կոոպերացիայի մասին” օրենքի հայեցակարգի նախագծի մշակման հարցերը /սկզբնական շրջանում ՀԽ անդամներից ստեղծվել էր աշխատանքային խումբ, որը քննարկել էր այդ հարցը և ներկայացրել հանձնաժողովին/:

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է երկու այց՝ Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի Լուկաշին համայնք և Բաղրամյանի տարածաշրջանի Քարակերտ համայնք:

Առաջին այցի ընթացքում ՀԽ անդամները հանդիպել են նշված համայնքներում ստեղծված կոոպերատիվների անդամների հետ, քննարկվել են կոոպերատիվների անդամների կողմից բարձրացված հարցերը և դրանց լուծման ուղիները:

Երկրորդ այցը կազմակերպվել է նույն համայնքներում՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ: Համայնքների կոոպերատիվների անդամների հետ հանդիպման ընթացքում ՀՀ վարչապետը արձանագրեց, որ արդեն ստեղծվել են գյուղատնտեսության զարգացման համար կարևոր սպառողական կոոպերատիվներ, որոնցում կամավոր հիմունքներով ընդգրկվել են գյուղացիական տնտեսությունները՝ հողերը միասին օգտագործելու, իրենց խնդիրները համատեղ լուծելու պայմանով: Այն

հնարավորություն է տալիս մոտ 20-30% նվազեցնել գործարարական ծախսերը և ավելի ինտենսիվ վարել գյուղատնտեսությունը:

Ձևավորվեց որոշակի կարծիք, որ գյուղատնտեսության զարգացումն ապահովելու համար պետք է խթանել նման տիպի կոոպերատիվների զարգացումը:

2. “Բերդաձոր-Կաքավաձոր” այգեգործական հասարակական կազմակերպության հողատարածքի կարգավիճակի վերաբերյալ առաջարկությունները;
3. “Ջրվեժ” անտառապարկից 21.76 հա տարածքի օտարման մասին հարցերը;
4. Գյուղապետի հետ համատեղ, ուսումնասիրվել և լուծման ընթացք է տրվել Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի Խաչփառ գյուղի մի շարք բնակիչների կողմից բարձրացված գազամատակարարման, խմելու և ոռոգման ջրի ապահովման հարցերին;
5. Դավմայի այգիների վիճակի մասին:

Հանձնաժողովի նիստերում բարձրացվել ու քննարկվել են նաև՝

- Ոռոգելի հողերի օգտագործման, ոռոգման համակարգերի նախապատրաստման, ոռոգման ջրով ապահովվածության, ոռոգման շրջանի սկսման ժամկետի: Քննարկվել է ոռոգման ջրի մատակարարման պլան-ժամանակացույցը (մասնավորապես Սևան-Հրազդան համակարգին), կատարվել են ճշգրտումներ ոռոգման ջրի պահանջարկի ծավալներում և ջրի մատակարարման ժամկետներում: Որոշվել և երաշխավորվել են ջրի ծավալը և բացթողնման ժամկետները:
- Երևան քաղաքում էլիտար շենքերի կառուցման հարցերը;
- Բերքի իրացման համար “ԳԱՖ” ԻԱՄ հետ համատեղ կազմակերպվել է Սեբաստիա-Մալաթիա շուկային հարակից սառնարանում գյուղմթերքների ընդունումը, պահեստավորումը և առաքումը վաճառողներին;
- Հակակարկտային կայանների տեղակայման և արդյունավետ շահագործման խնդիրները;
- Սերմնաբուծության և սելեկցիայի զարգացման խնդիրները: Աշխատանքային կարգով համապատասխան մասնագետների հետ քննարկվել է, մասնավորապես, 2010-2014թ.թ. ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագիրը ու ծրագրի իրականացման համար սերմնաբուծական տնտեսություններին աջակցելու խնդիրները: Առաջարկվել է առաջնահերթ ներկրված բարձր վերարտադրության սերմերը տրամադրել սերմնաբուծության տնտեսություններին և հետևել վերարտադրությունը կազմակերպելու գործընթացին:

Հանձնաժողովի ենթահանձնաժողովներում և աշխատանքային խմբերում քննարկվել և համապատասխան առաջարկություններ են ներկայացվել՝

- սերմնաբուծության /ՀԽ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովի նախագահ Յ.Ջավադյանի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարին/,
- տոհմաբուծության,
- ոչխարաբուծության /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարին/,
- ոռոգման և ջրարբիացման համակարգերի վերակառուցման /ՀԽ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովի նախագահ Յ.Ջավադյանի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ Ջրայտնակման/,
- Արարատյան դաշտի ջրային և հողային պաշարների օգտագործմանը վերաբերող հարցեր:

Տեղում ուսումնասիրվել է Երևան քաղաքի Տիչինա փողոցին հարակից հողատարածքները կառուցապատման նպատակով օտարելու հարցը և առաջարկվել է քաղաքաշինության նորմերին համապատասխան ապահովել կառուցվող օբյեկտների և Շահումյան թիվ 2 գերեզմանատան միջև 300մ հեռավորությունը, որն ընդունվել է:

Ուսումնասիրվել, քննարկվել, դրական լուծում է տրվել բնակիչների դիմումներին, բողոքներին և առաջարկություններին, մասնավորապես՝

- Իջևանի տարածաշրջանի Բերքաբեր, Կայանավան գյուղերի;
- Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի;
- Գավառ քաղաքի;
- Կոտայքի մարզի Արտավազ գյուղի;
- Հրազդանի տարածաշրջանի Արզակյան գյուղի;
- Արմավիր քաղաքի;
- Երևան քաղաքի Բաֆֆու փողոցի բնակիչների դիմումներին;
- Քանաքեռի տնամերձ հողերը ոռոգման ջրով ապահովելու;
- Ավանի Քուչակ թաղամասի թիվ 2 շենքին հարակից կաթսայատան վերակառուցման;
- Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի բնակիչների հողերի խոշորացմանը վերաբերող հարցերին:

Հանձնաժողովը կազմակերպել է սեմինար-քննարկումներ նվիրված գյուղկոոպերացիայի զարգացմանը, Արմավիրի մարզի մի շարք կոոպերատիվների այցելություններ, 2009թ. նոյեմբերի 23-24-ին՝ ՖՐՈՒՏՖՈՒԼ ԱՐՄԵՆԻԱ-ի հետ համատեղ համաժողով՝ կապված գյուղատնտեսության հիմնահարցերին:

Առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովը /204 անդամ/ բաղկացած է 6 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 11 անդամ: Հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովը անցկացրել է 3 լիազումար նիստ և 2 կոլեգիայի նիստ:

Հանձնաժողովը քննարկել է հեռաբժշկության զարգացման մասին ծրագիրը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին և ՀՀ առողջապահության նախարարություն/: 2010 թվականի հունիսի 6-ին ՀԽ էր դիմել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը՝ “Մարդուն օրգաններ եւ հյուսվածքներ փոխպատվաստման մասին” օրենքի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ վերը նշված հանձնաժողովի եզրակացությունը ստանալու խնդրանքով: Հանձնաժողովը համակողմանիորեն քննարկելուց հետո իր եզրակացությունը ներկայացրեց ՀՀ Սահմանադրական դատարան: Բացի այդ, հանձնաժողովը քննարկել է առողջապահության և սոցիալական ոլորտին վերաբերող հետևյալ օրենքների նախագծերը.

- “Առողջապահության մասին”;
- “Դեղերի մասին”;
- “Սոցիալական աջակցության մասին”;
- “Բարեգործության մասին”;
- “Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” /Դ.Դումանյանի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալակն հարցերի հանձնաժողովի նախագահ Ա.Բաբլոյանին/;

- “Հումեոպատիկ ցողունային բջիջների մասին” /Դ.Դումանյանի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ Ա.Բարլոյանին/:

Հանձնաժողովը քննարկել է նաև առողջապահության համակարգի ֆինանսավորման հարցը /ապահովագրական բժշկություն/, բժշկական և սոցիալական գործունեության խնդիրը, արտոնագրման և լիցենզավորման հարցը, մասնավոր բժշկական հիմնարկների աշխատանքների կանոնակարգման հարցը, ինչպես նաև պատասխանել է սոցիալական բնույթ ունեցող 54 դիմում-բողոքների:

Միջազգային ինտեգրման, կրոնի և սփյուռքի հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի միջազգային ինտեգրման, կրոնի և սփյուռքի հարցերի հանձնաժողովը /216 անդամ/ բաղկացած է 4 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 9 անդամ: Անցած ժամանակաշրջանում հանձնաժողովը անցկացրել է 4 լիազումար և 9 կոլեգիայի նիստեր:

Հանձնաժողովը քննարկել ու ՀԽ նիստին է ներկայացրել Երեւանում գորգարվեստի թանգարան հիմնելու առաջարկությունը, ԱՄՆ նախկին նախագահ Վուդրո Վիլսոնի հիշատակը հավերժացնող միջոցառումներ իրականացնելու մասին հարցը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ նախագահին և ՀՀ վարչապետին/, Մ.Սարյանի տուն-թանգարանի ոչ բարվոք պայմանների կապակցությամբ վերականգնողական և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ խնդիրը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ Նախագահին և ՀՀ վարչապետին/:

Հանձնաժողովի նախագահ Ռուբեն Սաֆրաստյանը ՀԽ նիստերին պարբերաբար տեղեկատվություն է հաղորդել հայ-թուրքական հարաբերությունների տարբեր փուլերի վերաբերյալ:

Ենթահանձնաժողովների առաջարկությամբ հանձնաժողովը քննարկել է արտերկրում ՀԽ կառույցներ ստեղծելու մասին առաջարկությունները, ՀԽ եթերաժամ ունենալու և “21-րդ դարում մարդու հոգևոր անվտանգությանն ուղղված մարտահրավերները և աշխարհիկ կրոնական կառույցների դերը այս բնագավառում” հարցերը:

Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովը ամենամեծն է ՀԽ-ում /402 անդամ/ և աշխատանքներն ընթանում են ավելի շատ ենթահանձնաժողովներում և աշխատանքային խմբերում: Հանձնաժողովը բաղկացած է 4 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 11 անդամ: Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է 3 լիազումար և կոլեգիայի 11 նիստեր: Կրթության և գիտության ենթահանձնաժողովը անցկացրել է 4, մշակույթի ենթահանձնաժողովը՝ 5, սպորտի՝ 6 և երիտասարդության՝ 12 նիստեր:

ՀԽ նախաձեռնել է կրթական համակարգում ծառայած խնդիրների քննարկում և առաջարկությունների փաթեթի մշակում: Կրթության և գիտության ենթահանձնաժողովը, ինչպես նաև հանրակրթության ոլորտին նվիրված աշխատանքային խումբը 8-ամսյա քննարկումներից հետո ՀՀ Նախագահին ներկայացրել են հանկրակրթության մասին առաջարկությունների փաթեթ:

Կրթության և գիտության ենթահանձնաժողովը աշխատանքը կազմակերպել է հիմնականում 10 աշխատանքային խմբերով, այն է՝ նախաադարոցական կրթություն,

հանրակրթություն, բարձրագույն կրթություն, գիտություն, օրենսդրություն, տեղեկատվություն և նամակներ, միջին մասնագիտական, բարոյահոգեբանական դաստիարակություն, կրթության որակի ապահովում, նորարական ներդրումներ և արտոնագրում: Ենթահանձնաժողովը քննարկել է գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը, ավարտական և ընդունելության քննությունների ընթացքը և դպրոցական դասագրքերի որակի հարցը:

Մշակույթի ենթահանձնաժողովը ՀԽ նիստին ներկայացրել է Հայաստանի պատմա-մշակութային հուշարձանների վերականգնման խնդիրները, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնված եկեղեցիների պահպանման և վանքապատկան հողերի օգտագործման հիմնահարցերը, լսվել են այդ խնդիրն ուսումնասիրելու համար անցկացված ստուգայցի արդյունքները /մասնավորապես, “Հաղարծին” համալիրին վերաբերող վանքապատկան հողերում առկա ապօրինի շինությունների օտարման մասին/: Բացի այդ, ենթահանձնաժողովը բաց քննարկումներ է կազմակերպել Երևանի “Մոսկվա” ամառային կինոթատրոնի հետագա ճակատագրի, հանրակրթության ոլորտում տիրող իրավիճակի, ՀՀ մարզերում ավանդական մշակույթի զարգացման հեռանկարային ծրագրի վերաբերյալ:

Երիտասարդության ենթահանձնաժողովը քննարկել է՝

- երիտասարդների հետբուհական զբաղվածության,
- ուսանողների սոցիալական պաշտպանվածության և երիտասարդ ընտանիքների սոցիալ – տնտեսական վիճակի,
- բանակում մի շարք առարկաների ուսուցում կազմակերպելու,
- կրթաթոշակների,
- բուհերում անվճար տեղերի կրճատումների հետ կապված հարցերը:

Ընթացքում է գտնվում առաջարկությունների փաթեթի մշակումը՝ կապված հայկական բանակի սպաների պատրաստման գործընթացի և զինվորների կրթական մակարդակի ուսումնասիրության հետ:

Սպորտի ենթահանձնաժողովը ընթացիկ հարցերից բացի քննարկել է հանրակրթական դպրոցներում աշխատող ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզադպրոցներում աշխատող մարզիչ մանկավարժների աշխատավարձերի համահավասարեցման նախաձեռնության հարցը:

Պաշտպանության, ներքին գործերի և անվտանգության հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի պաշտպանության, ներքին գործերի և անվտանգության հարցերի հանձնաժողովը /74 անդամ/ բաղկացած է 4 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 7 անդամ: Հանձնաժողովը անցկացրել է 6 լիազուսմար և 6 կոնգրեսային նիստեր: Հանձնաժողովը քննարկել է 1941-1945 թվականների Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների ազգային ծրագրի կատարման վերաբերյալ իր առաջարկություններն ու ներկայացրել ՀԽ նիստին /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ Նախագահին և ՀՀ վարչապետին/: Բացի այդ, հանձնաժողովն անցկացրել է ոստիկանության աշխատանքը գնահատելու մասին հարցախույզ /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ ոստիկանապետին/, որի արդյունքները ներկայացվել են համապատասխան մարմիններին: ՀԽ են ներկայացվել ոստիկանության ստորաբաժանումներում քաղաքացիների դիմում բողոքների ընթացքի հետ կապված հարցերը:

Հանձնաժողովը քննարկել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում Մպայական փոխօգնության միություն ստեղծելու վերաբերյալ և ՀՀ հանրակրթական դպրոցներում Ռազմական պաշտպանություն առարկայի դասավանդման հարցերը:

Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովը /156 անդամ/ բաղկացած է 5 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ունի 11 անդամ: Հանձնաժողովը անցկացրել է 4 լիազուստ և կոլեգիայի 7 նիստ: Հանձնաժողովը երկու անգամ փորձաքննության է ենթարկել “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերը և ներկայացրել է իր դիրքորոշումն ու առաջարկությունները, որոնք ՀՀ արդարադատության նախարարությունը սկզբից չէր ընդունել, սակայն միջազգային փորձաքննության եզրակացությունից հետո հանձնաժողովի առաջարկությունների մեծ մասը հաշվի է առնվել:

Հանձնաժողովն առաջարկել ու մշակել է ՀՀ հեռուստառադիոհեռարձակողների գործունեության էթիկական սկզբունքների խարտիայի նախագիծ, որը հիմք է հանդիսացել 12 հեռուստաընկերությունների ստորագրած Խարտիայի վերջնական տարբերակի համար:

Հանձնաժողովը ներկայացրել է նաև “ԶԼՄ-ների մասին” ՀՀ օրենքում և ՀՀ “Քաղաքացիական օրենսգրքում” փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ իր կարծիքը, հանդես է եկել 2009թ. համաներման դրույթները ընտրակեղծիքներ և լրագրողների նկատմամբ բռնություն հանդիսացող հանցագործությունների նկատմամբ չտարածելու առաջարկությամբ: Հարց է բարձրացրել ՀՀ կառավարության 05.08.2010թ. 1042-Ն որոշման վերանայման /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին ու ՀՀ ԱԺ/, Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի սովորողների նկատմամբ աշխատակցների կողմից իրականացված հակաօրինական գործողությունների կապակցությամբ և լրագրող Մ.Սուխուդյանի նկատմամբ հարուցված քրեական գործերի անաչառ ընթացքն ապահովելու վերաբերյալ:

Հանձնաժողովում ընդգրկված իրավաբան-մասնագետներն անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել մոտ երկու տասնյակ դիմումատու քաղաքացիների: Քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմումներում բարձրացված խնդիրները ներկայացվել են ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի անդամները բազմիցս մասնակցել են քաղաքացիական հասարակության հիմնախնդիրներին նվիրված տարաբնույթ տեղական և միջազգային խորհրդակցությունների, գիտաժողովների, սեմինարների, այդ թվում նաև` ՀՀ ԱԺ-ում “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի և “ՀՀ ընտրական օրենսգրքի” նոր խմբագրությամբ տարբերակի լսումներին:

Ձեռնարկատիրական գործունեության և սպառողների շահերի պաշտպանության հարցերի հանձնաժողով

ՀՀ Հանրային խորհրդի ձեռնարկատիրական գործունեության և սպառողների շահերի պաշտպանության հարցերի հանձնաժողովը (թվով 85 անդամ) բաղկացած է 5 ենթահանձնաժողովներից և 5 աշխատանքային խմբերից: Հանձնաժողովի կոլեգիան կազմված է 12 անդամներից: Անցած ժամանակահատվածում հանձնաժողովն ունեցել է 4 լիազուստ, ընդլայնված կազմով կոլեգիայի 6 և հերթական 22 նիստեր:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ Հանրային խորհրդի լիազուստ նիստերում քննարկվել է`

1. Ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագների իջեցման, որակի բարձրացման հարցը:

2. “Ազգային համագործակցություն” հիմնադրամի և “Ազգային համագործակցության ցանց” բազմակողմանի ծառայություններ մատուցող հեռահաղորդակցման կառույցի ստեղծման ծրագիրը:

Հանձնաժողովի առաջարկություններն ընդունվել են Հանրային խորհրդի կողմից և հետագայում ներկայացվել ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանը, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Հանձնաժողովի առաջարկությամբ ՀԽ գյուղատնտեսական և բնապահպանության հարցերի հանձնաժողովի կոլեգիայի նիստում քննարկվել է հեռահաղորդակցման ժամանակակից միջոցների օգնությամբ գյուղմթերքների արտադրության խթանմանը, իրացմանը նպաստելու հետ կապված ծրագիրը, որն արժանացել է կոլեգիայի հավանությանը:

Երևանի քաղաքապետարանը համապատասխան բաժնի, համատիրությունների, շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հանձնաժողովում քննարկվել է բարձրահարկ շենքերում վերելակային տնտեսության անմխիթար վիճակի բարելավման անհրաժեշտության հարցը: Հաշվի առնելով, որ ներկայումս գործնականում հնարավոր չէ ամբողջությամբ թարմացնել վերելակային տնտեսությունը՝ խորհրդակցությունում ընդունվել է որոշում՝ առաջարկել համապատասխան կազմակերպություններին, թարմացմանը զուգընթաց կազմակերպել վթարային իրավիճակների կանխարգելմանը նպաստող միջոցառումներ, մասնավորապես, որոշ անհրաժեշտ մասերի դրսից գնման, տեղում արտադրության կազմակերպման, որակյալ վերանորոգման ապահովմանը նպաստող քայլեր:

Սպառողների շահերի պաշտպանության ենթահանձնաժողովը, հանրային ծառայությունների գծով աշխատանքային խմբի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համապատասխան բաժնի և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպած ստուգայցերի միջոցով ներկայացրել է առևտրի ոլորտում թերակշռումների պատկերը, պարբերաբար կատարել համապատասխան ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հեռուստատեսությամբ, մամուլով ներկայացրել է հանրությանը:

Ներկայումս՝ հանձնաժողովում շարունակվում են սպառողների շահերի պաշտպանության համար՝ անհրաժեշտ տեղեկատվական համակարգի, սոցիոլոգիական ուսումնասիրությունների հիման վրա “Հանրային կարծիքի շտեմարան” տեղեկատվական բազայի, ԱՀՅ-ի շրջանակներում՝ գյուղերում հեռակապի կենտրոնների, հայտարարությունների “Գյուղի տախտակ” կայքի, զանգվածային լրատվամիջոցներով հանրության հետ անմիջական կապի ապահովման կառույցի ձևավորման միջոցով:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովը /166 անդամ/ բաղկացած է 4 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդրկում է 11 անդամ: Անցկացվել են 7 լիազումար և 12 կոլեգիայի նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են “ՀՀ բնակավայրերի քաղաքաշինական ծրագրերի փաստաթղթերի ապահովման միջոցառումների մասին” և “ՀՀ գյուղական համայնքներում քաղաքաշինական և ճարտարապետական ծառայությունների ապահովման միջոցների մասին” հարցերը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/: Հանձնաժողովի կոլեգիայի անդամները մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության կոլեգիայի նիստերին: Քննարկվել և ընթացքի մեջ է Ձորաղբյուր ամառանոցի 5000-ից ավելի բնակիչներ ունեցող բնակավայրի առաջնահերթ հարցերի ուղղությամբ համալիր ծրագրի մշակումը /համաձայն ՀԽ-ին ուղղված բնակիչների դիմումների/, ինչպես նաև այդ բնակավայրին

համայնքի կարգավիճակ տալու հարցը: Հանձնաժողովն արտագնա նիստ է գումարել Արագածոտնի մարզի Ուջան համայնքում՝ համայնքի հասարակական խորհրդի հետ համատեղ, որի արդյունքում օգնություն է ցուցաբերվել գյուղում խմելու ջրի անցկացման, 50 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի շահագործման հարցերում: Հանձնաժողովը աշխատանքներ է տանում Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի համայնքների հետ /Վագաշեն, Պառավաքար, Կոթի, Կարմիրաղբյուր/:

Բացի այդ, հանձնաժողովը նիստերում քննարկել են հետևյալ հարցերը՝

- Բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման բարելավման ուղղությամբ կառավարության 5-ամյա ռազմավարական ծրագիրը:
- Համայնքների խոշորացման ծրագրի մասին:
- Անտառների շահագործման այլընտրանքային ծրագրի մասին:
- Կրթական համակարգի բարելավման մասին:
- Համայնքներում կանաչապատման տարի հայտարարելու մասին:

Նշված բոլոր հարցերը լուսաբանվել են “Հայաստանի Հանրապետություն” պաշտոնաթերթում և լրատվություն է թողարկվել հեռուստատեսությամբ:

Գենդերային և ժողովրդագրական հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի գենդերային և ժողովրդագրական հարցերի հանձնաժողովը /65 անդամ/ բաղկացած է 2 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 7 անդամ: Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է 5 լիազումար և 12 կոլեգիայի նիստեր, որտեղ քննարկվել է “Կանանց դրության բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման” ազգային ծրագրի կատարման հարցը: Հանձնաժողովը առաջարկել է սահմանել “Ընտանիքի օր” տոնը / ՀԽ գենդերային և ժողովրդագրական հարցերի հանձնաժողովի նախագահ Ե.Վարդանյանի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ վարչապետին/, քննարկել է “Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին” ՀՀ օրենքը /ՀԽ նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ Նախագահին/, ինչպես նաև ԱԺ-ում քննարկման ժամանակ որոշ առաջարկություններ ներկայացրել “Ընտրական օրենսգրքի” լրամշակված տարբերակի մասին:

Հանձնաժողովը քննարկել է նաև “Ընտանիքի հիմնախնդիրները” հարցը և ներկայացրել է առաջարկություն՝ անցկացնելու “Ընտանիքի տարի” ծրագիրը: Առաջարկությունն ուղարկվել է ՀՀ կառավարություն:

Ազգային փոքրամասնությունների հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի ազգային փոքրամասնությունների հարցերի հանձնաժողովը /78 անդամ/ բաղկացած է 3 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 5 անդամ: Անցկացվել են 5 լիազումար և 6 կոլեգիայի նիստեր, քննարկվել են հարցեր՝ կապված տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման ընթացքի վերաբերյալ ՀՀ զեկույցի հետ, ինչպես նաև 2 միջադեպ Ֆիոլետովո գյուղի հետ կապված: Հանձնաժողովը անցկացրել է 3 արտագնա նիստ, այդ թվում նաև Արարատի մարզի Հովտաշեն գյուղ՝ կապված 13-ամյա եզդի երեխայի անհետանալու հետ:

Պետախրավական հարցերի հանձնաժողով

Հանրային խորհրդի պետախրավական հարցերի հանձնաժողովը /181 անդամ/ բաղկացած է 10 ենթահանձնաժողովից: Հանձնաժողովի կոլեգիան ընդգրկում է 12 անդամ:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 4 լիազումար նիստ /այդ թվում և ընդլայնված/ և կոլեգիայի 8 նիստ:

Պետաիրավական հարցերի հանձնաժողովը ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ մասնակցել է “Փաստաբանության մասին” ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին: Նշված նախագծով նախատեսվել է՝

ա/ ստեղծել փաստաբանական դպրոց.

բ/ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու մասով սահմանել սոցիալական անապահով խմբերը, որոնք կարող են իրավաբանական օժնություն ստանալ նաև քաղաքացիական, սահմանադրական և վարչական գործերով.

գ/ հստակեցնել փաստաբանների պալատի ներկառուցվածքային խնդիրները.

դ/ տարբերակել փաստաբանական կազմակերպությունները, որպես մասնագիտական կազմակերպություններ.

ե/ սահմանել և հստակեցնել փաստաբանների իրավունքները և երաշխիքները:

Ներկայումս, նախագիծը գտնվում է ՀՀ ազգային ժողովում:

Հանձնաժողովը ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ մշակում է նաև ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նախատեսված դատական ծախսերի մեջ ներառված փաստաբանական ողջամիտ ծախսերին վերաբերող միջին գնացուցակի նախագիծը: Հանձնաժողովն այս նախագիծը լայն քննարկման է դրել և ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանը:

Նույն կազմակերպության հետ իրականացվել են նաև փաստաբանական գաղտնիքի և մարդու ազատությունների խախտման հետ կապված քննարկումներ, որոնց արդյունքում կազմվել են համապատասխան առաջարկություններ:

Կատարվել է պետության կարիքների համար իրականացվող գործարքների հետ կապված իրավիճակի ուսումնասիրություն և կազմվել է համապատասխան տեղեկանք:

Բացի այդ, հանձնաժողովը “ՀՀ-ում անպտղության աճի”, դպրոցներում սեռական դաստիարակության թեմաներով կազմակերպել են քննարկումներ: Հանձնաժողովը քննարկման առարկա է դարձրել նաև մանկատան երեխաների ետմանկատնյան կյանքին վերաբերող հարցերը և առաջիկա անելիքները տվյալ ոլորտում, նրանց սոցիալական իրավունքների պաշտպանության հարցերը ՀՀ-ում: Քննարկվել են նաև հաշմանդամների զբաղվածության և աշխատանքային իրավունքների հիմնախնդիրների ներպետական օրենսդրության և միջազգային-իրավական ակտերի համապատասխանության հարցերը:

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ ԱԺ-ի հանձնաժողովներում, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված խորհրդաժողովներում ՀՀ Ընտրական օրենսգրքի նոր տարբերակի քննարկումներին և ՀՀ ԱԺ-ի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով ներկայացրել հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից մշակված ՀՀ Ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ բազմաթիվ առաջարկներ:

Պետաիրավական հանձնաժողովը կազմակերպել և պատրաստել է մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծեր, ինչպես նաև կազմակերպել և մասնակցել է բազմաթիվ օրենքների կամ օրենքների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներին:

Ձևավորվել է համագործակցային ցանցեր, որոնց միջոցով իրականացվել են մի շարք ոլորտների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական ծառայության մրցույթների և ատեստացիաների ու նոտարական գրասենյակների մասնակցային մոնիտորինգ:

Հանձնաժողովում մշակվել է ՀՀ հեռուստատառադիոհեռարձակողների գործունեության էթիկական սկզբունքների խարտիայի նախագիծ, որի հիմնարար դրույթները տեղ են գտել 12 հեռուստաընկերությունների կողմից ստորագրված Խարտիայի վերջնական տարբերակում:

Հանձնաժողովի ստեղծած աշխատանքային խմբերը մշակել են “Ամբողջականության հիմունքները պետական ծառայությունում” կրթական նոր մոդուլ, որը հետագայում, մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համագործակցությամբ՝ ներդրվել է քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրում:

Հանձնաժողովի անդամները՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, ՀԽ դիմած շահառուների խնդրանքով մասնակցել կամ ներկա են գտնվել այդ անձանց վերաբերյալ գործերով դատական նիստերին:

Դիմող կողմի և նրա հակառակորդ կողմի վեճի կապակցությամբ վերջիններիս և իրենց փաստաբանների անմիջական մասնակցությամբ քննարկումներ են կազմակերպվել, որի արդյունքում երկու կողմերին առաջարկվել է այլընտրանքային լուծում՝ հաշտության տարբերակով:

Հանրային խորհրդի անդամ **Կարեն Բեքարյանի** առաջարկությամբ ՀԽ նիստում քննարկվել և ընդունվել է ՀՀ պետական դրոշի տոնի մասին որոշումը:

Հանրային խորհրդի անդամ **Վլադիմիր Մովսիսյանը** ՀԽ նիստերի ժամանակ ներկայացրել է 2010 թվականի գյուղմթերումների ընթացքի և իրացման կազմակերպման խնդիրների մասին և ՀՀ-ում ոռոգելի երկրագործության արդյունավետության բարձրացման ուղիների մասին տեղեկատվություն:

Հանրային խորհրդի անդամ **Կարինե Դանիելյանը** ՀԽ լիազուրկում նիստերին բազմիցս բարձրացրել է Երևան քաղաքում տիրող բնապահպանական իրավիճակին առնչվող հարցեր, ներկայացրել սանիտար-հիգիենիկ, քաղաքաշինական և կառուցապատման հետ կապված խնդիրներ: Այդ բոլոր հարցերը քննարկելու նպատակով ՀԽ-ի շրջանակներում ստեղծվել է աշխատանքային խումբ:

ՀՀ Նախագահի հետ հանդիպման ժամանակ Կ.Դանիելյանը հարց բարձրացրեց՝ Ադրբեջանի հետ տեղեկատվական պատերազմում տանուլ տալու վերաբերյալ, ինչը հետագայում արժանացավ քննարկման և տրվեց լուծում:

Բացի այդ Կ.Դանիելյանի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարությանն ուղղված բազմաթիվ դիմումներից հետո նախարարի հրամանով ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է զբաղվի “Կրթություն հանուն կայուն զարգացման” ՄԱԿ-ի տասնամյա ծրագրի իրագործմամբ: Այդ ծրագրի ռազմավարությունը և գործողությունների հաջորդականությունը մշակվել է Կ.Դանիելյանի կողմից:

Հանրային խորհրդի անդամ **Խոսրով Հարությունյանը** կոորդինացրել է ՀԽ-ի շրջանակներում ստեղծված և գյուղատնտեսական հարցերին նվիրված աշխատանքային խմբի գործունեությունը:

Հանրային խորհրդի անդամ **Արմեն Տեր-Տաճատյանը** ընդգրկված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և առաջարկություններ ներկայացնող Մարդու Իրավունքների Պաշտպանի գլխավորությամբ գործող աշխատանքային խմբում և ակտիվորեն մասնակցում է օրենքի վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը:

Հանրային խորհրդի անդամ **Հովիկ Մուսայելյանը** կոորդինացրել է հեռուստառադիոհեռարձակողների գործունեության էթիկական խարտիայի մշակումը և ստորգրումը՝ կապված հայկական հեռուստաթերի հաղորդումների բովանդակության հետ /ՀԽ անդամներ **Հայկ Դեմոյանի, Հովհաննես Հովհաննիսյանի և Գրիգոր Բաղիրյանի** հետ համատեղ/, ինչպես նաև ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագների իջեցման ու որակի բարձրացման վերաբերյալ ՀԽ շրջանակներում ստեղծված աշխատանքային խումբը /ՀԽ անդամ **Արշակ Սադոյանի** հետ համատեղ/:

Հանրային խորհրդի անդամ **Հովհաննես Թադևոսյանը** աջակցել և ապահովել է ՀԽ աշխատանքային խմբի այցելությունները Տավուշի մարզ:

ՀԽ-ին ուղղված դիմում-բողոքներ և առաջարկություններ

2009 մայիսի 5-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 1-ը ՀՀ Հանրային խորհրդի գրասենյակը ստացել է 411 դիմում-բողոքներ, 95 առաջարկություններ, 33 պաշտոնական գրություններ և 108 այլ գրություններ: Դիմում-բողոքների և առաջարկությունների մեծ մասը ուղղվել է ՀԽ համապատասխան հանձնաժողովներին: Բացի այդ, ՀԽ հանձնաժողովները նույնպես ստացել են բազմաթիվ դիմումներ և առաջարկություններ: ՀԽ նախագահ Վ.Մանուկյանի անձնական հսկողության տակ գտնվող դիմում-բողոքներից 33-ը լուծվել են, 8-ը՝ ոչ, 12-ը՝ ընթացքի մեջ են:

ՀԽ 12 ոլորտային հանձնաժողովները ստացել են դիմում-բողոքներ և առաջարկություններ հետևյալ համամասնությամբ՝

Կրթություն, գիտություն	44 դիմում-բողոք; 7 առաջարկություն
Պետախրավական	176 դիմում-բողոք
Քաղաքացիական հասարակություն	30 դիմում-բողոք; 3 առաջարկություն
Ֆինանսատնտեսական	40 դիմում-բողոք; 46 առաջարկություն
Գյուղատնտեսություն	18 դիմում-բողոք; 17 առաջարկություն
Առողջապահություն	54 դիմում-բողոք; 8 առաջարկություն
Տարածքային	11 դիմում-բողոք; 4 առաջարկություն
Պաշտպանություն	20 դիմում-բողոք; 3 առաջարկություն
Ձեռնարկատիրական	12 դիմում-բողոք; 3 առաջարկություն
Ազգային փոքրամասնություն	5 դիմում-բողոք
Գենդերային	2 առաջարկություն
Կրոն-սփյուռք	5 դիմում-բողոք; 2 առաջարկություն

Քաղաքացիների՝ Հանրային խորհրդին ուղղված դիմումների մեծ մասը վերաբերում է դատական ատյանների անարդար որոշումներ կայացնելուն, այդ թվում՝

1. Մեփականության իրավունքի ոտնահարման դեպքեր՝
 - Հյուսիսային պողոտայի բնակիչների վերաբերյալ;
 - Դալմայի այգիների հողօգտագործողների /շուրջ 50 ստորագրություն/ վերաբերյալ /ՀԽ քննարկել և իր եզրակացություններն է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն/;
 - Մասնավոր անձանց միջև բնակարանային վեճերի վերաբերյալ;
 - Բնակֆոնդի, քաղաքապետարանի, կադաստրի և նոտարական գրասենյակների կողմից անհիմն և ավելորդ խոչընդոտներ ստեղծելու վերաբերյալ:

2. Դատախազների և քննիչների կողմից գործերը սխալ ընթացք տալու դեպքեր;
3. Բանկերից վարկ ստացած և չվերադարձնելու արդյունքում քաղաքացիների սնանկանալու դեպքեր;
4. ՀՀ քաղաքացիների և փախստականների իրավունքների ոտնահարման հետ կապված;

Դիմումների հաջորդ խումբը կազմում են սոցիալական բնույթի հարցերը՝

- հաշմանդամների թոշակների հետ կապված;
- բժշկական օգնության դիմում-խնդրանքներ /պետպատվեր, դեղորայք/;
- բալային համակարգի թերության հետևանքով նպաստների վերականգման հետ կապված;
- անօթևանների վերաբերյալ;
- բուհ-ում ուսման վարձի վերաբերյալ;
- աշխատատեղերի ավելացման վերաբերյալ:

Կան նաև բազմաթիվ այլ դիմումներ, կապված՝

- ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելու դիմումների հետ;
- ավանդների վերադարձման հետ;
- ֆինանսական աջակցություն ստանալու դիմումների հետ;
- տրանսպորտային ոլորտի տարաբնույթ հարցերի հետ /սակագներ, նոր ուղիներ, կանգառներ/;
- գազի սակագների և ներտնային ծառայության վճարումների հետ;
- վարչատարածքային փոփոխությունների հետ;
- գյուղերում ճանապարհների նորոգման խնդիրների հետ;
- Երևան քաղաքի աղբահանության խնդիրների հետ;
- Արմենտելի կողմից հավելագրումներ կատարելու հետ;
- ինտերնետի սակագների հետ;
- սպառողների իրավունքների պաշտպանության հետ:

Բազմաթիվ են բողոքները՝ կապված բնապահպանական հարցերի հետ:

Մասնավորապես՝

- Հայաստանի տարբեր շրջաններում հանքերի շահագործման հետ կապված;
- Երևանի տարբեր տեղերում ծառահատման, սանիտարական պաշտպանիչ գոտու վերացման վերաբերյալ;
- Քանաքեռ ՀԷԿ-ի եղևնու անտառների հետ կապված;
- Երևանի “Ուսանողական այգում” ծառահատման վերաբերյալ;
- Խոսրովի անտառի հետ կապված;
- Արենի գյուղի արգելոցում սրճարան կառուցելու վերաբերյալ:

Քանի որ պետաիրավական հարցերի հանձնաժողովի ստացած դիմումների քանակը գերակշռող էր, ուստի հանձնաժողովում ստեղծվել և գործում է քաղաքացիների ընդունելության աշխատանքային խումբ: Համապատասխան ենթահանձնաժողովների միջոցով ՀԽ դիմած շահառուներին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, ուսումնասիրվել քաղաքացիների կողմից ՀԽ հասցեագրված մի շարք դիմումներ և տրվել են պատասխաններ:

Դիմումները վերլուծելով հանձնաժողովի փորձագետները եկել են այն եզրակացության, որ իրավական շատ խնդիրներ առաջանում են քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին անտեղյակության, պասիվ դիրքորոշման, պաշտոնյաների ոչ պատշաճ գործելակերպի, ինչպես

նաև քաղաքացիների մեծամասնությանը որակյալ իրավաբանական խորհրդատվության և ծառայությունների անմատչելիության արդյունքում:

Հանրային խորհրդին ուղղված վերը նշված դիմումների քննարկումների ու ուսումնասիրությունների արդյունքում կարելի է հետևություն անել պետաիրավական համակարգի, քաղաքապետարանի /մասնավորապես, ճարտարապետա-շինարարական և անշարժ գույքի վարչությունների/ և ՀՀ կառավարությանն առընթեր պետական կադաստրի վարչության գործունեության հետ կապված կոռուպցիոն ռիսկեր պարունակող բազմաթիվ գործառույթների առկայությամբ, որոնք պայմանավորված են նաև այդ ոլորտների օրենսդրական դաշտի անկատարությամբ:

Հանրային խորհուրդը հասարակական կազմակերպություններից և անհատներից ստացել է շուրջ 95 առաջակություններ, որոնք հասցեագրվել են համապատասխան հանձնաժողովներին՝ քննարկումներ կազմակերպելու նպատակով: Այդ առաջարկություններից են՝

- Էներգետիկների համայնական ասոցիացիայից՝ կապված էներգետիկայի համակարգում ուսումնական կենտրոնի ստեղծման հետ, որը պետք է պատրաստի և վերահսկի այս ոլորտի կադրերին;
- Ավիացիայի նախկին աշխատողներից՝ փոքր ավիացիայի զարգացման հայեցակարգը;
- Սփյուռքի ենթահանձնաժողովի անդամ Ա.Կարապետյանից՝ Երևանի բնակարանային ֆոնդի պահպանման և տանիքների վերանորոգման վերաբերյալ;
- Քաղաքացի Վ.Վարդանյանից՝ հայկական ստանդարտ հիմնելու վերաբերյալ;
- Պատմա-մշակույթային արժեքների ենթահանձնաժողովի նախագահ Ժ.Ասրյանից՝ սփյուռքում ՀԽ ներկայացուցիչներ ունենալու հետ կապված;
- Մշակույթի ենթահանձնաժողովի անդամ Գ.Ներսիսյանից՝ Երևանում Գարեգին Նժդեհի արձանի տեղադրման վերաբերյալ;
- ՀԽ անդամ Յ.Զավադյանից՝ համատեղ առևտրային ընկերություններ ստեղծելու վերաբերյալ /ՀԽ-ի նախագահի ստորագրությամբ ուղղվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարին/;
- Հեռուստատեղից հնչող լեզվի մաքրության վերաբերյալ, և այլն:

ՀՀ Հանրային խորհուրդ
5 մայիսի, 2011 թվ., ք.Երևան